Հովհաննես Թումանյան

Երկու հայր

1896-ի կոտորածի ձմեռն էր: Մի խումբ փախստականներ Սասունի կողմերից հասան Էջմիածին: Նրանց մեջն էր և Ա. գյուղի ծերունի տեր Սարգիսը:

Հայրիկի աչը կուզեմ համբուրել, խնդրեց նա Վեհարանում, ու ներս թողին:

Բարով, տեր հայր, աչը մեկնեց Հայրիկը:

Քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորտակված:

Ո՞րտեղից կուգաս:

Սասունի կողմերեն. Ես Ա-ի տեր Սարգիսն եմ…

Ա-ի տեր Սարգի՞սը…

Այո՛, Հայրիկ:

Է՞…

Ես քսան հոգուց գերդաստան ունեի, Հայրիկ. տղաներս կոտորեցին, հարսերս տարան, թոռներս կորան, տունս թալնեցին, վառեցին . մնացի այսպես…

Է՛, հիմի…

Ես ոչինչ չեմ ուզում, Հայրիկ: Ես… այնպես եկել եմ… եկել Հայրիկին ասեմ… էլ ոչինչ չեմ ուզում…

Ու Հայրիկի առջև կանգնած էր մարդը, որ ամեն ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում:

Երկուսն էլ լուռ էին:

Քանի՞ որդի կորցրիր, տեր Սարգիս, գլուխը վեր քաշեց կաթողիկոսը:

Ամենքը միասին քսան, Հայրիկ:

Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար, պատասխանեց Հայրիկը, այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան… Ո՞ւմն է շատ, տեր Սարգիս…

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր:

Ո՞ւմ վիշտն է մեծ, տեր Սարգիս:

Հայրիկինը:

Դե, ե՛կ, տեր Սարգիս, մոտ ե՛կ, աջդ դիր գլխիս, աղոթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ:

Ասավ ու գլուխը խոնարհեց:

Քահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսեց աղոթք մրմնջալ, ու աչքերը լցվեցին արտասուքով…

Նա օրհնում էր Հայոց Կաթողիկոսի՛ն…

Նրա առջև խոնարհած էր Հայոց Հայրիկը…